

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԱՂՕԹԱՍԱՏՈՅՑԻՆ(*)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ Ա.

ՊԱՇՏՕՆ ԱՂՕԹԻՑ

1. ԿՈՉՈՒՄՆԵՐ: - 2. ԾԱԳՈՒՄ: - 3. ՀԱՅՈՑ
ԳՈՎ: - 4. ՀԱՒԱՏԱՅԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՎ:

1. Կոչումներ. — Հասարակաց աղօթքին հնազոյն եւ ընդհանրական կոչումն էր, Հայոց քով, Պաշտօն, զոր կը գործածէ Ս. Սահակ գիշերային աղօթքի մէջ՝ ըսելով. «ի նոյն պաշտօն քո կանխել միշտ». իսկ կանոններուն մէջ կ'անուանէ «պաշտօն սաղմոսերգութեան» (Բ. գ.): Նոյն պաշտօն բառն նաեւ Փաւստոս (118), Եղիշէ (21, 228), Ղազար Փարպեցի (36, 226), Կիրակոս Գանձակեցի (145): Յաճախապատմաբ կ'անուանէ «հասարակաց պաշտօն» կամ «պաշտօն եկեղեցւոյ» (7):

(*) Ողբացեալ Հ. Վարդան Վ. Հացունի անտիպ գրութիւններէն՝ կարեւոր կը համարին հրատարակել «Պատմութիւն Հայոց Աղօթամատոյցին» (Ժամերգութեան), որ իր ուսումնասիրած եւ հրատարակած գրքերուն շարքին մէկ նոր ճիւղն է: Գործը երկու մասի բաժնուած է: Առաջինը՝ տասը գլուխներով կը խօսի Ա. Աղօթքի կոչումին եւ ծագումին վրայ, Բ. Լեզուին, Գ. Աղօթքի թիւին եւ ժամերուն, Դ. Ժամերու կոչումներուն եւ խորհուրդի մասին, Ե. Թէ օրուն մէջ քանի՞ էին, Զ. Ժամերու կցմունքի, տեղափոխութեան, զեղումի եւ համաձայնութեան մասին, Է. Պարտը հասարակաց աղօթքին, Ը. Որո՞նք են պաշտօնեաները, Թ. Աղօթքի վայրերը, հոսկ Ժ. գլուխով կը ճառէ պաշտամունքի սպասներուն վրայ: Երկրորդ մասով կ'ուսումնասիրէ, չորս գլուխներու մէջ, Ժամերգութեան զարգացումը մեր մէջ, Դ-Ժ. դար:

Ս. Սահակ յիշեալ տեղոյն մէջ կը յարէ. «եւ նովին կանոնիւս անդադար փառաւորել» զոր կը կրկնեն Փաւստոս (230), Մով. Խորենացի (Գ. խթ), եւ Ղազար զանազան ձեւերով. «գպաշտօն կանոնին» (209), «գկանոն պաշտաման ժամու աղօթիցն» (204), կամ «գպաշտօն կարգեալ ժամուցն» (171): Սահակեան կանոնները կ'ըսեն դարձեալ՝ «գպաշտօն կատարեն եւ գկարգ» (Ա. լը), «կարգ պաշտաման» (գ. Ե), կամ «կարգ պաշտաման» ըստ Փաւստոսի (230), եւ «եկեղեցւոյ կարգ» Խորենացիէն (Գ. լգ). եւ դարձեալ Սահակ «պաշտօն սաղմոսերգութեան» (Ա. գ): Թաթլոյ խրատն՝ «ի սաղմոսերգութիւն» կամ «գկանոնեալ սաղմոսն» (54, 56):

Ընդարձակ խմատով Յովհան Մանդակունի նաեւ «ի ժամ աղօթիցն» (42):

Շատ հաւանական է որ ծիսադիտութեան նուիրուած Մեծարդոյ Հեղինակը, գիրքը տպագրութեան տալէն առաջ՝ դեռ աւելի ճիշտացնէր եւ ամբողջացնէր իր գրութիւնը, որ ապագայ նոյն նիւթը ուսումնասիրողներուն կրնայ ուղեցոյց եւ ատղձ ծառայել: այս մտածութեամբ է որ կը հրատարակենք:

Ներկայ ուսումնասիրութեան ամփոփոյքը, բանաստեղծեան նիւթ եղած է 1940ի Ապրիլ 15ին, Ս. Ղազարու ձեռնարանական հաւաքոյթի մը ընթացքին:

Լեզուական կարգ մը հպումներ կատարած ենք Մեծարդոյ Հեղինակին ընդգրկին վրայ. բայց յաճախ ստիպուած ենք անփոփոխ պահել ինչ ինչ գրաբար ձեւեր, որոնք ծիսական յայտնի բանաձեւեր են:

Յօդուածաշարը աւարտելուն՝ պիտի տանք աղբիւրներու ցանկը:

Պարտաւայ ժողովն «աստուծային աղօթք» (Բ). եւ գրիչ Ս. Ղազարու 1465ի ժամագրքին՝ «հասարակաց աղաբս»: Կեղծ Օձնեցի (142) ու Ներսէս Շնորհալին (138) «պաշտօներգութիւն» կը կոչեն: Յովհաննէս պատմիչ (Ժ2), Կիրակոս Եղնկացի (64) ու Գրիգոր Խլաթեցի (Յաւ. Ը) «ժամակարգութիւն»: Եւ Վահակն եւ Ս. Ղազարու 1436ի մաշթոցը(1) «ժամապաշտութիւն»:

Եւ որովհետեւ որոշեալ ժամերու հետ կապուած էին այս աղօթքները, ժամ բառը, խառնուած յիշեալ վկայութեանց մէջ, առանձինն ալ գործածուած է երբեմն հասարակաց աղօթքի (ու պատարագի) իմաստով. եւ նախ «վրան ժամու» դասական բացատրութեան մէջ, որ կը նշանակէ աղօթից վրան, եւ իրապէս ալ կար մեր քով, ինչպէս պիտի տեսնենք մեր Թ. գըլխուն մէջ: Ստեփանոս Միւնեաց եպս. ունի «կազմած ժամուցն» (492): Մաշտոցը, սկսեալ Ս. Ղազարու հնազոյն օրինակէն՝ ԺԱ. դարու, յետ Հիմնարկութեան ու Նաւակատեաց եկեղեցւոյ «մտանն ի ժամ», կ'ըսէ, նկարագրելով կատարելի պաշտօնն ալ, որ կ'աւարտի պատարագով, եւ կրկնուած է Յ. Իմաստասէրի ընծայուած մէկ ճառին մէջ եւս (122): Գրիգոր Տաթեւացի կ'ըսէ. «ի հնումն եօթն անգամ էր ժամն»(2): Եւ նոյն խմատով աղօթատեղին ալ կոչուած է «ժամատուն» կամ «ժամատեղ»(3): Հոսկ յետոյ ստացաւ «կարգաւորութիւն հասարակաց աղօթից» յորջորջումը, սկսեալ Թովմա Մեծոփեցիին օրինակէն, որ զայս կը նշանակէ իւրաքանչիւր ժամու գլխին(4):

Յիշեալ կոչումներէն հնազոյնն ու հաւաքատագոյնը՝ պաշտօն՝ սեփական էր

Յոյներուն ու Հատիններուն եւս, եւ կը նշանակէր ծառայել Աստուծոյ աղօթքով. իսկ կանոնը, յունարէն բառ, եւ նոյն իմաստով ծանօթ եւ Յոյներուն, մեր քով առնուած կը թուի սաղմոսաց «կանոններէն», որ գլխաւոր մասերն էին հասարակաց աղօթքի, ինչպէս պիտի տեսնենք:

2. Ծագում. — ա. Միաբանական աղօթքը, արդէն յայտնի Հրէից, քրիստոնէութեան մէջ կը սկսի Առաքեալներու օրերէն: Պողոս Առաքեալ կը յիշեցնէր զայն Կորնթացւոյ, նշանակելով անոր բովանդակութիւնն ալ. «Յորժամ ի մի վայր ժողովիցիք, իւրաքանչիւր ոք ի ձէնը եթէ սաղմոս ունիցի, եթէ վարդապետութիւն ունիցի, ... եթէ քարգմանութիւն (մեկնութիւն գրոց) ունիցի»(5) եւ այլն: Կոստանցւոյ եւ Եփեսացւոյ եւս կ'ըսէր. «Սաղմոսիւք եւ օրհնութեամբք եւ երգովք հոգեւորօք եւ շնորհօք օրհնել ի սիրտս ձեր զԱստուծո»(6): Իսկ Տիմոթէոսի կը պատուիրէր. «Միտ գիր ընթերցուածոց, միտքարութեան, վարդապետութեան»(7), որ կը խառնուէին պաշտամանց մէջ: Եւ կ'ուզէր որ իր թղթերն ալ կարդացուէին եկեղեցւոյ մէջ(8): Սաղմոսք, երգ, օրհնութիւն կը պաշտուէին բոլորէն միաբանութեամբ. ընթերցուածք Ս. Գրոց՝ ընթերցողէն, եւ մեկնութիւն կամ վարդապետութիւն՝ կարողներէն, մանաւանդ առաջնորդէն, որպիսի էր Տիմոթէոս:

Պաշտամունքի այդ առաքելական յօրինումը շարունակուեցաւ, եւ Բ. դարուն Տերտուղիանոս կը վկայէր՝ թէ «ընթեռնուն զիրք, կամ երգին սաղմոսք, կամ խօսեցեալ լինին քարոզք»(9): Հետզհետէ զարգացաւ աղօթքը, եւ բնականապէս ան-

- (1) Օրհնութիւն ժամատան:
(2) Քարոզք ամառան, 336:
(3) Աստ. Գլ. Թ. Է:
(4) Աստ. Գլ. Դ:
(5) Ա. Կորնթ. ԺԳ. 26:

- (6) Կողոս. Գ. 16: Եփես. Ե. 19:
(7) Ա. Տիմոթ. Դ. 13:
(8) Կողոս. Դ. 16: Ա. Թես. Է. 17:
(9) Ջհողոյ, Թ:

հաւասար ձեւով այլ եւ այլ եկեղեցիներու մէջ, թէեւ պահելով նոյն նախկին տարրերը: Եւսեբիոս Կեսարացի Դ. դարուն կը զգացնէ յատկապէս սաղմոսներու վայելած մեծ յարգը, որ աղօթքի գլխաւոր բաժինը կը կազմէին, գրելով այսպէս. «Պատուիրանն երգելոյ սաղմոսս յանուն տեառն՝ պահէր ընդ ամենայն տեղիս. քանզի այս հրաման սաղմոսելոյ զօրէ յամենայն եկեղեցիս որ կանն յաղինս, ոչ միայն ի Յունաց, այլ եւ ի բարբարոսացն» (10): Այսպէս նաեւ Ա. Առաքելական կանոնք, ասորական շարադրութիւն եւ Դ. դարուն արդէն ծանօթ, կը պատուիրեն՝ որ «ի պաշտաման եկեղեցւոյ ասացեն զսաղմոսս եւ զօրհնութիւնս Դաւթի, պաշտել օր ըստ օրէ յամենայն ժամ (զմարդարէութիւնսն Դաւթի ծժ սաղմոս)» (11) (ԻՔ): Նոյն կանոնները կը սահմանեն եւս՝ որ «յեկեղեցւոյ գիրք ընթերցցին Հին կտակարանք՝ օրէնք եւ մարգարէք, եւ Նոր կտակարանք» (1): Եթերիա, ուխտաւոր յերուսաղէմ իբր 397 թուականին, կը նկարագրէ հոն լսած ժամերգութիւնները, որ կազմուած էին երգերէ, սաղմոսներէ, աղօթքներէ, ընթերցումներէ եւ քարոզներէ (512 եւն.):

Ս. Բարսեղ Հայրապետ Կեսարու՝ առ Նէոկեսարացիս թղթին մէջ կը յիշէ իր վիճակին գիշերային պաշտօնը, որ կը կաշանար սաղմոսաց, երգերու եւ աղօթից մէջ (12), եւ որոնց կը խառնուէին նաեւ ընթերցումով Ս. Գրոց՝ ըստ զանազան ակնարկութիւններու զորս կը մատնանշէ Բէռնմէր (Ա, 121): Մերս Եղիշէ «ի կողմանս հարաւոյ» բնակեալ միանձանց պաշտօնը կը ներկայացնէ հետեւեալ կերպով. «Կատարեալ զտուրնջեան պաշտօնն, լաւ համարեցան զգիշերն վաղայարոյց լինելով՝ մինչեւ յառաւօտ աղօթիցն պարապեալք, եւ ընթերցումն զգիրս սուրբս...»

առնեն մեկնութիւնս ի միսթարութիւն լըսողացն... զխրատս բարեաց կարգեն ի լսելիս ժողովրդոցն՝ վկայութեամբ սուրբ գրոց»։ ատոնց հետ միանգամայն «երգս հոգեւորականս քաղցրանուազս փոփոխելով» (Խրտ. 161):

ՅՀ. Ոսկերեան Անտիոքայ մէջ կը նրկարագրէր իր ժամանակի վանականներուն կանոնական աղօթքը: Հաւախօսի ժամուն, կ'ըսէ. «միահառաչ երգեն զմարգարէական օրհնութիւնս»։ Եւ կը կոչէ զանազան սաղմոսներ՝ որ անոնց աղօթքին մասերն էին: Եւ «իբրեւ զառաւօտին զաղօթսն եւ զօրհնութիւնս կատարիցեն, կ'ըսէ, ապա յընթերցումս գրոց շրջին», վերջինս առանձնաբար: Նոյնպէս յաջորդ սահմանեալ ժամերուն «ըստ իւրաքանչիւր մասանցն սաղմոսիւք եւ օրհնութեամբ պատուեն զԱստուած» (13): Նոյնինքն կը վկայէ դարձեալ. «Յորժամ հաւատացեալքն հսկիցեն յեկեղեցւոյ, Դաւիթ է ի սկզբան, ի միջի եւ ի վախճանի անդ: Եթէ ընդ այդն կամ իցէ երգել երգս, Դաւիթ է որ սկսանի անդրէն, յառաջ մատուցանէ եւ աւարտէ» (14):

Ք. Քրիստոնէութեան առաջին երեք դարերուն՝ հասարակաց պաշտօնը կապուած էր կիրակիի հետ: Նոր կտակարանի մէջ երկու տեղ յայտնապէս յիշուած է այդ վերապահութիւնը: Գործք առաքելոց կ'ըսեն. «Յաւուրն շաբաթուց (յն. ի միաշաբաթուն) մինչդեռ ժողովեալ էաք բեկանել զհացն» (Ի, 7). Եւ Պօղոս կը յորդորէր Կորնթացիները՝ բերել իրենց եղբայրական օգնութիւնն «ըստ իւրաքանչիւր միաշաբաթուցն» (Ա. ԺԳ, 2), ըլլալով ատոնք ժողովման միակ օրերը:

Այնուհետեւ ոչ մէկ ապահով ակնարկութիւն կայ հասարակաց աղօթից հանապազօրգութեան մինչեւ Դ. դար, ինչպէս կը

հետեւցնէ Ս. Բէռնմէր, աչքէ անցընելով այդ շրջանի մատենագիրներու վկայութիւնները, որ կը խօսին աղօթքի մասին (Ա, 61-78): Դ. դարուն միանձանց անապատական ցրուած կեանքը փոխուեցաւ միաբանական կենակցութեան. Եւ անոնց առանձնական ամէնօրեայ աղօթքը՝ որուն նուիրուած էին՝ վերածուեցաւ հասարակաց պաշտաման՝ ի մեծագոյն չափ եղբայրութեան. այնպէս որ մանքերն եղան հիմնադիրները այդ դպրութեան, ինչպէս կը խորհրդածէ Բէռնմէր (Ա, 103): Իսկ աշխարհի եկեղեցիները հրապուրուած առնոց օրինակէն, շուտով նմանեցան: Առաքելական կանոնները յիշեցին վերեւ «օր ըստ օրէ» սաղմոսերգութիւնը, Եւ նոյն սովորութեան ակնարկեցին Եւսեբիոս եւ Ոսկերեան Եւս, առաջին երկուքը խօսելով ընդհանուր եկեղեցւոյ մասին, եւ վերջինը վանականներուն:

3. Հայոց քով. — Միեւնոյն պաշտօնասիրութիւնը, աղօթքի եղանակն եւ օրըստօրէութիւնը կը տեսնենք նաեւ Հայոց քով Դ-Ե դարերուն, որ մեր քրիստոնէութեան սկզբնական շրջանն է. Եւ ուր մեր աղղը հետեւեցաւ միւս հին եկեղեցիներու օրինակին, Եւ առաւելապէս յունականին, մանաւանդ Կապադովկիոյ, որ եղաւ հայ ծէսին աղբիւրը: Փաւստոս՝ պատմիչ Դ. դարու՝ կը վկայէ, թէ մեծին Ներսէսի օրով «ընդ ամենայն երկիրն Հայոց կարգը պաշտաման եկեղեցւոյն մեծապէս պայծառացեալ էր, եւ բազմութիւն սրբոց պաշտօնէիցն կանոնացն»։ այսինքն որ կը մասնակցէին հասարակաց կանոնաց կամ աղօթից. «Եւ յիշատակ սրբոց վկայից յաւուրս նորա յամենայն տեղիս Հայոց մեծախումբ ժողովովք հանապազ պայծառանային» (230) հանդիսական ժամակարգութեամբ: Հայ աղատանին եւ այլ քրիստոնեաներ Պարսից բանակին մէջ, ուր կոչուած էին, եւ իրենց հետ քահանաներ ու պաշտօնեաներ, «սկսան այնուհետեւ,

կը դրէ ականատես վկայն Եղիշէ, բարձր բարբառով, սաղմոսիւք եւ երգովք հոգեւորօք եւ մեծապայծառ վարդապետութեամբ յայտ յանդիման մեծի բանակին զպաշտօնն ցուցանել» (21): Հայոց ապրտամբութեան շրջանին, կը կրկնէ նոյն պատմիչը, «Չայնք պաշտօնէիցն ի տուէ եւ ի գիշերի անընդհատ էին ի սուրբ սաղմոսսն. ընթերցումք աստուածային կրտակարանացն ոչ երբեք առնուին դադարումսն յամենայն ժամ. սոյնպէս եւ մեկնիչքն ի միսթարութիւն երկնաւոր վարդապետութեանն» (102): Արտաղու մէջ՝ ուր բանակած էին Հայերը Արեաց դէմ, եւ իրենց քով Ղեւոնդեանք, «հասեալք ի ժամ երեկոյն», կ'ըսէ Ղազար, «Եւ զկանոն պաշտաման ժամու աղօթիցն ըստ սովորութեանն լցեալ», ապա կ'ընթերցեն (204): Նոյնպէս առաւօտեանն ալ «հանդերձ ամենայն քահանայիւքն» (209): Ս. Սահակ իր կանոններուն մէջ խօսելով եկեղեցւոյ մասին, կ'ըսէ՝ թէ «հանապազ անդր գուժարելով՝ լսեմք զսաղմոսերգութիւնս եւ զպաղագամս պատուիրանացն Աստուծոյ»։ նոյնպէս Եւ «զժամուցն քարոզութեանցն եւ զաղօթիցն մատուցումն» (Ա. ԼԵ, Գ): Յաճախապատուր կը յիշատակէ «զանուշահոտութիւն զսաղմոսից եւ զօրհնութեանց... ի բերանոյ սրբոց պաշտօնէից» (119): Եւ Մանդակունին կ'ըսէ՝ թէ պըղերդն եկեղեցի երթալով, «ոչ զօրհնութիւնս լսէ, եւ ոչ զվառարանութիւնսն իմանայ, եւ ոչ ի սիրտ նորա մտանեն ընթերցումոցն վարդապետութիւնք» (41): Այս ամէնն աշխարհի եկեղեցիներու եւ աշխարհական կղերին սեփական պաշտօնն ու զորքը կը ներկայացնեն:

Գալով վանականներու, Մովսէս Խորենացին կը պատմէ Ս. Սահակ Հայրապետի համար՝ թէ «Սա ամենայն առաքիւնութեանց հարցն նմանեալ. աղօթիցն մասամբ առաւելեաց»։ Եւ իր վաթսուց «կրօնաւոր» աշակերտներու հեն «մշտնջեանոր պաշտամբ կատարէր զկանոնսն՝ որպէս

(10) Մեկն. Սաղմոսաց, ԿԵ:

(11) Փակագծեալք հայ թարգմանութեան յատուկ է:

(12) Հայրախօս. յունարէն, ԼԲ. 164:

(13) Մեկն. Թղթոց Պաւղոսի, Ա. 125-28:

(14) Ճառ 2. Յաղագս ապաշխարութեան:

զայն որ յանապատն էին» (Գ. խթ) : Ըստ Կորինթի՝ Ս. Մաշթոց յետ գրոց գիւտին կը հիմնէ զանազան եղբայրանոցներ, սահման դնելով անոնց՝ «պատրաստել զսիրտս երգովք հոգեւորօք ի փառս եւ ի դոփութիւն Աստուծոյ : Անդ, վըսէ, կըթուլիւն քաղցրութեամբ ընթերցուածոց հոգեպատում գրոց. անդ քաջաւերութիւն յորդորական վարդապետութեամբ... անդ աղօթք աղերսաւիք եւ խնդրուածք հաշտեցուցիչք վասն ամենեցուն կենաց առ մարդասէրն Աստուած» : Եւ ինքն իսկ «նորին հոգեկրօն արուեստին հանէր աւուրս բազումս յանապատ տեղիս» (23) : Բոլոր այդ շեղագիրները հասարակաց աղօթքին մասերն էին : Թաթուլ՝ հիմնադիր համանուն ուխտին, խրատ կու տայ Թումասու, իր աշակերտին եւ յաջորդին, փոյթ ունենալ կատարելու «զկանոնեալ սաղմոսն», եւ կըթել «զիւրսն ի սաղմոսերգութիւն եւ ի ձեռագործս», եւ այլն (56, 54) : Որոշ է ուրեմն վանականներու դերն ալ ժամակարգութեան մէջ :

4. Հաւատացեալներու քով. — Նոյնպէս էր եւ մեր քով. բարեպաշտ աշխարհականները կը մրցէին քահանաներու ու վանականներու հետ աղօթասիրութեան մէջ : Մեծին Վարդանայ ապարանքին մէջ, կը պատմէ Ղազար, իր դրան պաշտօնեաները «զպաշտօն կարգեալ ժամուցն զցայտ եւ զցերեկ բազում փութով մօտէին անյապաղ» (171) : 451ի պատերազմին ձախողութեամբ կապանքի մատնուած հայ նախարարները՝ յետոյ ազատած ու մտած Պարսից բանակին մէջ, հոն իսկ «անվեհեր կատարէին կարգեալ կանոնս գութայից, կըսէ նոյն պատմիչը, եւ կարդացմունս ընթերցուածոց զցայտ եւ զցերեկ» (330) : Վարդ արարիկ Ռշտունի է. դարուն, ըստ

Յովհ. քորեպիսկոպոսի՝ եկեղեցւոյ պաշտօնեաներուն հետ «զտիւ եւ զդիշեր ոչ պակասեցուցանէր ի տան իւրում զերգս աստուածային սաղմոսաց, կատարելով անխափան եօթն անգամ» (15) : Ժ. դարուն Գր. Մաղիստրոսի հաւը՝ Գրիգոր Համդէ եւ հանը՝ Շուշիկ կ'անցընէին «հանապազօր սաղմոսերգութեամբ, ... պահովք եւ աղօթիւք վերագոյն քան զանապատականս երեւեալ», կը գրէ նոյն իշխանը (16) : Կեռան Թադուհին, կենակից Լեւոն Բ.ի, «հանապազօր կանխէր, կը գրէ Աւետիս յերկրպագութեան Տեառն՝ ի գիրկս մօր մերոյ Սիովնի սրբոյ», եւ հոն բոլոր աղօթքներուն հետ ուշադրութեամբ «ունկըն դնէր գրոց սրբոց» (17) եւս : Խաչենոյ իշխանն Հասան Ջալալ՝ Ժ.Գ. դարուն, կը պատմէ Կիրակոս, «զպաշտօն տուրջեան եւ զիշերոյ անխափան կատարէր ուր եւ լինէր՝ իրրեւ զմանորայսն» (145) : Յիշենք նաեւ Օշին Թադաւորի եւ Գ. Կոստանդինի մօր՝ Մարիուն տիկնոջ սեփական ժամագրերը, հասած մինչեւ մեզի, մէկը Հալէպ եւ միւսը Ս. Ղազար, որոնք իրական փառտերն են անոնց հաւատարիմ հետեւողութեան հասարակաց աղօթքներուն : Բայց ցարդ մեր տեսածէն աւելի ընդարձակ էր անոր կիրարկութիւնը հաւատացեալներու կողմէ, ոչ միայն Հայերուս, այլ ամբողջ քրիստոնէութեան մէջ, ինչպէս կը վկայէ Եւսեբիոս՝ գրելով. «Ընդ ամենայն աշխարհ, ի քաղաքս եւ ի գետս եւ ի դաշտս անգամ... երգեն ի ձայն բարձր զերգս եւ սաղմոսս առ Աստուած» (18) : Վարդանանց պատերազմէն յետոյ Հայերը փախստական լեռներու մէջ, հոն անգամ չէին մոռնար աղօթքը, այլ ըստ Եղիշէի «սաղմոսք էին նոցա միմունջք երգոց, եւ ընթերցուածք սուրբ գրոց կատարեալ ուրախութիւնք» (195) : Նաեւ հայ տիկիներու, որոնց ա-

մուսիները գերի տարուած էին, կ'ըսէ նոյն վկան, «սաղմոսք էին մշտնջենաւորք միմունջք ի բերանս նոցա, եւ միսիթարութիւնք կատարեալք ընթերցուածք մարդարէիցն» (324) : Աւելին կ'աւանդէ մեզի Փարսեցին, թէ յետ Թարգմանութեան աստուածաշունչ գրքին՝ կը ցնծար բովանդակ Հայութիւնը, «մեծամեծք եւ տղայք, սաղմոսելով եւ կցորդս ասելով ընդ ամենայն տեղիս, ի հրապարակս եւ ի փողոցս եւ առտնին» (47) : Ժողովուրդը եկեղեցիէն դուրս բնականապէս հասարակաց աղօթքներու այն մասերը միայն կ'ըսէր՝ զոր գիրտէր կամ կարող էր կարդալ :

Այդ բոլոր վկայութեանց մէջ աւնիւրեւ է ժամասացութեան ընդհանրականութիւնը մեր ազգին մէջ : Եւ իր բովանդակութիւնը կը կազմէին իր ծագմանը մէջ կամ

Ե. դարուն՝ ըստ ժամանակակից աղբիւրներու՝ Դաւթի սաղմոսները, մարգարէական օրհնութիւնները, կցորդներ, փառաբանութիւններ, աղօթք կամ խնդրուածք, ընթերցուածք Ս. Գրոց, եւ անոնց մեկնութիւնները կամ վարդապետութիւնները, որոնց նկարագրութիւնն եւ հետզհետէ զարգացումը պիտի տեսնենք աշխատութեանս երկրորդ մասին մէջ : Բոլոր ատոնք կային ամբողջապէս նաեւ միւս եկեղեցիներու ժամերգութիւններուն մէջ, զորս յիշեցինք վերեւ. որոնցմէ կը համոզուինք՝ թէ մեր աղօթքները արդիւնք էին մեզմէ հնագոյն եւ բարդաւած ազգերու եւ աշխարհներու սովորութիւններուն, զորս յօժարութեամբ ընդունեցան մեր հայրերը կրօնական համերաշխութեամբ՝ զոր ունէին անոնց հետ :

Հ. ՎԱՐԴԱՆ ՀԱՅՈՒՆԻ

(Շարունակելի)

(15) Հայաստան, 231 :

(16) Գր. Մաղիստրոսի թղթերը :

(17) Ազգագր. հանդէս, 1910, Բ. 23 :

(18) Մեկն. Սաղմոսաց. ԿԵ :